

Այսպիսով անհերքաւոր, թէ՛ Հասարակական, թէ՛ Ազգային, թէ՛ Միջազգային, թէ՛ Միջ-
կրկին և արդարաւանաւ, որքէն է միջազգային, արդարեւ է
միջազգային, և ծառայել Աստուծոյ:

Աստի՛ Վահանայն՝ Բարձրագոյն Բարձրագոյն Բարձրագոյն
եղեղէն Բարձրագոյն և ասպա կանոնաւ զերեւելայն և
կիջեցնէ ի ջուր, և անուն կոչնէ ասելով,
(այս անուն) Ծառայաւ Աստուծոյ եկեալ
յերեւելայն-Բարձրագոյն, ՄԱՐԿԻ
ՅԱՆՈՒՆ ՀՕՐ ԵՒ ՈՐԳԱՆՈՅ ԵՒ
ՀՈԳԱՆՈՅՆ ՈՐԳԱՆՈՅ 4): Գնեալ արեւմտեան
Վերջապահ է Ծառայաւ-Բարձրագոյն, ընդունել
զորքէն-Բարձրագոյն Հօրն երկնաւորն, ինչեւ Ծառայաւ
արեւմտեան Վերջապահ, և արեւմտեան Հօրն
արեւմտեան: Եսիկայ մի անգամ ասելով՝ երկուս
ի ջուր կ'ընդունէ զերեւելայն, նախ յասելն
ՅԱՆՈՒՆ ՀՕՐ, երկրորդ՝ ԵՒ ՈՐԳԱՆՈՅ ԵՒ
ՀՈԳԱՆՈՅՆ ՈՐԳԱՆՈՅ և ըստ այսմ՝ մի անգամ ամենա-
սուրբ Երրորդութեան անուն կ'ընդունէ, և
երեւելայն անգամ ընկղմումն կ'ընէ ի ջուր:

Չորէն հանելով՝ կասէ՛ Վահանայն,
(եթէ մկրտեալք մէկէն աւելի են՝ յոգնա-
կի) Որք է Վերջապահ Վերջապահ, Վերջապահ
զգեցեալ է, արեւմտեան Որք է Հօրն արեւմտեան
արեւմտեան, արեւմտեան Հօրն Բերեւելայն է յեւ,
արեւմտեան:

Յետոյ Սաղմոս՝ Բարձրագոյն Բարձրագոյն Բարձրագոյն
արեւմտեան և այլն. որում կ'հետեւի շարական՝
Որ համագոյն է՝ Հօրն և Որքն յիշխն, և
ասպա Պօղոսի Հոգեւորացի զրաժ թուղ-
թը թէ՛ Եւրէն Բերեւել, զի որ Բարձրագոյն

կանաց յատկացեալ է Հօրն մէջ, - ինչպէս երեւմ
մի երկտաւարդի Տօնէից կամ Բերեւել ըստ ին
տեղ Վերջապահ ստորագրելը:

4) Այս է Մկրտութեան խորհրդոյ եւնիք Բարձրագոյն
հետեւեալքն բացայտիւք ներգործութեանն են:

Վերջապահ է Վերջապահ Յետոյ, և այլն, զի ին
Եւրտարանն Մատթէոսի, Յայնժամ Գոյ
Յետոյ է Գոյնիկէն է Յորդանան արեւմտեան
հանելոյ, և կաւարտուի դա է որքէն է՝ Բերե-
ւել ընդ որ համեցայ: Յետոյ Հօրն Բերե-
ւել:

Հայս վայր Մկրտութեան խորհրդոյն
է: Այսուհետեւ կսկսանի Վերջապահ խոր-
հրդոյն:

(Եւրեւելէն)

ՎԱՆԴԱՄ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԱՆԿՈՒՆԻ:

ՊԱՏՄԱԿԱՆ

ՃԱՆԱԳԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ

(Եւրեւելէն-Բերեւել)

Ի մէջ Հօրն ոչ զոր յառաջ ազնուական
տոհմ, իսկ այժմ՝ քանի մի ընտանիք են առ նո-
սա պատուեալ անուամբ իշխան կամ մելիք. և
ընդ թէ յառաջ եկեալ են ի նախնի ազնուա-
զարմ ցեղից, որոց ազնուութիւն ասի թէ հաս-
տատեալ է ի Տէրութենէն Սուրբոյ, և է տոհ-
մային. Առ Թաթարս են մեծատոհմ ընտանիք
անուամբս թէ կամ ընդ, որ նա ինքն է իշխան,
յոյժ յարգիք ի համազգայնոցն իւրեանց. այլ
սկիզբն կամ ծագումն նոցա դժուարիմաց:

Առ Վիրս ազնուութիւնն թաթարի յերիս կար-
գըս. Դեղերուլք, Թաթարք, և Ացնուր, Դեղե-
րուլ ասին նախնասէր տոհմ, զորս մարթ է ա-
նուանել արքայազարմս. ըստ որում աւանդու-
թիւնն զնէ զնոսա յառաջ եկեալ ի Քարթլոսէ
առաջին արքայէն, որ ընդոծնեօք և ընտանեօք
եկն բնակեցաւ ի կողմանս յայտոսիկ և էր (ըստ
ասից) մի յեօթանց նահապետացն Վրաց որդւոց
Թորգոմայ *): Դեղերուլք առին զտիտղոսս միմա-

(*) Տես զպատմութիւն Վրաց Վախթանգայ Ե. ի սկզբանն
18 դարու զԹարգոմանեալն ըստ մասին ի Քաթարթոյ. հաս-
Բ, էր. 12.
Հեղինակն.

վար) որ ի վերջոյ ասացաւ Թաւառայ այս ինքն է « փառք երկրին », սակայն ի նոցանէ այնք միայն առին զպատուանունս, որք տիրէին բերդաւոր քաղաքաց, ամրոցաց, գաւառաց եւն. և էին սոքա տոհմական աւանանք վսեմ. զրանն ի զանազան պաշտօնս որոշեալք: Առաջնակարգ պատուանունն կրող ընտանիք են. Բարատօ — խվիլի^(*), տիրապետողք անկախ մասին Աօրիսու ի հարաւակողմն Տիփիսոյ. Ավաֆլանիս — խվիլի կամ Օրպիան. Արղուժա — խվիլիս, որ էառ ի Ռուսաց զանունս երկայնարազուկ. Յուրացիս — խվիլի, և այլք մինչև ցքսան:

Երկրորդ կարգ ազնուականաց Արաց են Թաւառք կամ քնեաղք (իշխանք), և յայտ է թէ յառաջ եկեալ իցեն ի կուսակալաց մանունց գաւառաց երկրին. այս Բ. կարգ աստիճանի, որպէս էր և Կերմանացի իշխանաց և դքսից, եղև երբեմն յաջորդական. զի թէ մեռանէր ոք ի սոյն գաւառարգէ, ածէին առ արքայ զսուսեր, զերիվարն և զերէց որդի հանգուցելոյն. թէ գտանէր զնա արքայ արժանաւոր ամբողջ մեծութեան հօրն, կացուցանէր ի տեղի նորա և անդէն մեծ իշխանն առաջի արքայի ածէր նմա սուսեր ընդ մէջ. իսկ թէ ոչ հաւանէր արքայ, տայր նմայ զայլ պաշտօն, և զերիվարն տանէին ի ձիաստանն արքունի. Գլխաւոր տոհմք Թաւառաց են՝ Արախիձէ^(**), Փալավանտիղ, Թոււմանիս — խվիլի, Յիցիս — խվիլի, ըստ Ռուսաց Յիցիսանով, Լեոնիձէ, Սիւտամանի եւն:

Երկրորդ կարգ իշխանազանց Արաց են անուրբք, կամ ստորին ազնուականք, որոց պաշտօն էր սպաս հարկանել արքային, կամ թուղիկոսին Արաց, և նախադաս իշխանացն յիշատակեալ երկուց կարգաց:

(*) Արղուսորութիւն խվիլի, նշանակէ դժագումն կամ զատիճան:

(**) Արղուսորութիւն դէսս նշանակէ ծագումն կամ աստիճան. այս վերջաւորութիւն ազգանունն գործածի և յԱնգղիոս, ի Գանիոս, Եսկաւուք և ի Կերմանիս. իսկ առ Արաւաւնքս նոյն է ԵՊՊԷ կամ ԵՊԷԷ:

Առաջնակարգ իշխանքն մի միայն ընդ հաւասարիցն ինքեանց առնէին խնամութիւն և ոչ նաև ընդ երկրորդ դասուն, նոյնպէս ոչ երկրորդն ընդ երրորդին, և ոչ երրորդն ընդ ժողովրդոց: Ըստ այսմ էր յայնժամ և եկեղեցական իշխանութիւնն Արաց, այս ինքն հաւասար քաղաքականին և անբաժանելի ի միմեանց. կամ թուղիկոսն կամ պատրիարքն արքայի ունէր պատիւ. յետ նորա արքեպիսկոպոսն, վերակացու և դատաւոր էր որրոց և այլևաց, աղքատաց և նեղելոց, և նա ունէր իրաւունս յանդիման կացուցանելոյ զնոսա արքայի, կամ յայտնելոյ զերս վերաբերեալս նոցին, առաջի զօրաց տանէր զսուրբ խաչն, և որպէս սա, նոյնպէս վանահայրք երեքտասան վանից կառուցելոց ի 565 ամէ ց570 ամն ի Ա. Գրիգորէ և յերկոտասան առաքելաբան ընկերաց նորա, կրէին պատուանունս Մթաւար. Եպիսկոպոսուք անունս Թաւաղ և Երիստաւ, իսկ քահանայք՝ Ացնուր, մթաւարք, և թաւառք. արքեպիսկոպոսուք և եպիսկոպոսուք կարէին լծադիլ ի մայր եկեղեցիս և ի վանս. իսկ անուրբք ի միւս եկեղեցիս. եպիսկոպոսուք յուղի առնէին զզօրս ի պատերազմ, և հաղորդէին զնոսա մարմնոյ և արեան Յիսուսի Քրիստոսի:

Յառաւօտուն նոր տարւոյն Արքեպիսկոպոսն մատուցանէր նախ քան զառաւօտեան պաշտամունս արքային և արքայուհւոյն Արաց զփոքրիկ փայտեայ կամ արծաթեայ խաչ, պատկեր, զդեստ և քանի մի մասունս շաքարի. նոյնպէս և համօրէն իշխանք և մեծամեծք բերէին պարգևս ըստ յարմարութեան իւրաքանչիւրոցն աստիճանի և պաշտօնի. զլխաւոր անտառապետն բերէր ի ձօն զրադէ, ակոռապետն թամբ զեղեցկանկար և զարդարուն. այլ ոմն երիվարս, և այլք այլ ինչ բազում Յերևիլ թագաւորին և թագուհւոյն տղաղակէր բազմութիւնն « ընդարձակեցէ Տէր յամայր ամօք զսահման կենաց և թագաւորութեանդ, և ի սիրտ թշնամոյն քո մեծեցի սուրբ... » յետ այնորիկ սկսանէին առնել տօնս ցնծութեան և հանդէսս. նոյնպէս ի կիրակէի զատկին ընթացնային ամենեքեան ի ձիարշաւ ասպարէզ, ուր եղեալ լինէր ի բարձրաւանդակի արծաթեայ կամ ոսկի բաժակ արքային, զի որ կրթմն և քաջա-

րին է յերիտասարդս առէ զայն: յետ ձիարշա-
ւիցն սկսանէին պէսպէս խաղս. ցորչաւի կաթու-
ղիկոսն և եպիսկոպոսունք անդ լինէին՝ երգս մի-
այն երգէին. իսկ յերանկն նոցա՝ նուագարանս
հարկանէին և կաբաւէին:

Տէրութիւնն Վրաց, ըստ ասից աղոյային պատ-
մագրաց նոցին, հնագոյն է քան զամենայն Տէրու-
թիւնս. ներքին կազմութիւն նորա ցանգ եկաց
մնաց անդրդուելի, թէև ըստ արտաքնոյն բազում
անդամ՝ հպատակեցաւ Միդիացւոց, Պարսից, Ա-
ղէքսանդրի, Հռովմայեցւոց, Բիւզանդացւոց, և ի
վերջին դարս Պարսից և Տաճկաց. կարգ թագա-
ւորացն Վրաց սկսանի ի Քարթլոսէ ժամանակե-
ցէն Աբրահամու 56). թիւ և ժամանակ նոցա
անյայտ. յետ Քարթլոսեանց ի յայտ գայ իշ-
խանութիւնն ներքովթեանց. զինի՝ Արշակուն-
եանց 57) և համարին յընթացս 566 ամաց մի
զինի միոյ յաջորդեալ քսան և ութն թագաւորք:
յետ նոցա իշխանութիւնն Խոսրովեանց, որք տի-
րեցին զամս 454. ի 545 ամի Փրկչին առաջին
Բագրատունի ամուսնացեալ ընդ թագաժառանգ
իշխանուհւոյ Վրաց ամարձաւ յարքայականն
աթոռ, և յաջորդք նորա սկսեալ ի վեցերորդ
դարու անտի տիրեցին յետ նորա զամս 1800. այն
է ցոխրապետութիւն Ռուսաց: Եթէ ոչ խոստո-
ւանեցի որ զՔարթլոսեանս, դարձեալ պատմա-
բանական ապացուցութեամբ երեւի զի տէրու-
թիւն Վրաց սկսեալ յԱրշակայ առաջնոյ տեւեաց
զամս 2,245. ոչ մի իշխանազն տոհմ՝ աշխարհի
մանաւանդ Եւրոպիոյ կարէ տանել մերձեցուցա-
նել զծագումն իւր ցիններորդ դարս Մեծահաւ-
շակ պատմագիրն Հայոց Մովսէս Խորենացի ըն-
ծայէ զվաստակս իւր Բագրատունեոյն Սահակայ:

(36) Պատմիչք Վրաց սխալին զնել զՔարթլոս ժամանա-
կակից Աբրահամու. զի Քարթլոս ժամանակակից էր մերոյն
Հայկոյ. իսկ առ Աբրահամու մերս Արամն էր աշխարհակալն,
Թոռն Թոռան Հայկայ. և եթէ ընդունի որ ճշմարտութեան
դրանս Միսիթայայ Անեցւոյ և Ստեփաննոսի Սրպեղեանց, Քար-
թլոս էր և եղբայր Հայկայ:

(37) Սխալին յոյժ յիշատակեալ պատմիչք, զԱրշակունիս
Վրաց զնել թագաւորս, այլ թէ յորմէ աղբերէ առեալ են,
մեզ չէ յայտ:

յընծայելն իւր ասէ. « Մի՛ հաւատար բանից
ստախոսից որք ասնին թէ ի ցեղէն յառաջ ե-
կեալ իցես Հայկայ, այլ ի Սմբատայ ժամանա-
կակցէն Նարուզդոնոսորայ: Զայս Սմբատ՝ որ էր
յարքայական տոհմէ այս ինքն ի ցեղէն Դաւիթ
առնրեաց հաբուզդոնոսոր ի Հայաստան, ուր
յաջորդք նորա մեծամեծ իշխանութեանց հասին
և տիրէին ժառանգաբար Սպեր երկրին. զիսաւո-
րի նոցա տուեալ էր իրաւունս թագ կապելոյ ի
զլուխ արքայից Հայոց: Յետ մահուան Մովսիսի
Խորենացւոյ կայսրն Բիւզանդիոյ շնորհեաց նոցա
և զարտուամեծար անունս Վիրապադատ: Բազ-
րատունիք հիմնեցին ի Հայաստան զհռչակաւոր
քաղաքն Անի և յամի 885 ի թագաւորութիւն
Հայոց ամարձան:

Մողղամետ խալիֆայն Բաղդատու արքայական
թագիւ պսակեաց զԱշոտ երկրորդ (Հաճն շահն
կոչեցեալ) ըսցս յամի 1079 բարձաւ աթոռ թա-
գաւորութեան սոցա. մասն ինչ Բագրատունեան
ցեղի զաթոռ թագաւորութեան կալաւ ի Վարս
և եկաց 962 ամէն 91080 ամս. Իսկ այլ ոմն
Բագրատունի Ռուբեն անուամբ զրկեալ ի թա-
գաւորութենէն ամրացաւ իւրովին հանդիւրձ ի
լերինս Վիլկիոյ և յաջորդք նորա տիրեցին հա-
մօքն երկրին, և միացան ընդ Արեւմտեան խոշա-
կիրս. կայսրն Հենրիկոս Զ. շնորհեաց նոցա զար-
քայական տիտղոս և եպիսկոպոսն Մայնցի Բոն-
րագ յամի 1198 էօծ թագաւոր ի Սիս զիշխանն
Ռուբեն 58). թագաւորութիւն սոցա յամի 1375

(38) Այլ զՌուբեն, այլ զԷդուարդ նորա 1, և ան որդի Ստեփա-
նէի, որպէս զնեն Սմբատ Գունգստապլ և Վահրամ վարդա-
պետ ժամանակակից պատմիչք. ըսցս Վահրամ չիլէ ամե-
նեկն զգալ արքեպիսկոպոսին Հռոմայ, այլ զնէ լեալ օծմանն
ի ձեռն Հայրապետին Յովնանուս Սեպտմ ամի
(646), յղեաց 1, և ան զԱրքեպիսկոպոսն Սոյ զՏէր Յովնանէս
արքայ ի խնդիր թագին, զոր թագաւորն Ալամանաց յուզար-
կէր նմա զհետ զօրացն, որ եկեալ էին անդ, և եկն անտից
արժէւքն (Աղուաղեան Գաղղիարէն քաղս արշէվէք, արքե-
պիսկոպոս) որ եկեալ էր հրամանաւ Պապուն Հռոմայ, ի
թաին 647 Յունուարի վեց, յոր Յայնուսեան օծեցին զ1, և
թագաւոր Հայոց. ի հնազանդութեան եկեղեցւոյն Հռոմայ
և Օնթրոշին (Աղուաղեան Գաղղ. քաղս ամփրեօր, կայսր.)
Ալամանաց և Տես Տարեգիրք Սմբատայ ապարապետի Հայոց:

բարձաւ յեղիպտացի Մամբուկաց, և վերջին Ռուբենեան Լեւոն Զ, ի տանէ Լուսինեան կրն-
քեաց զկեանս իւր ի Բարիզ, յամի 1391, Լսի թէ
օրինաւոր ժառանգք նորա գտանին ցարդ ի Գաղ-
ղիա, նոյնպէս և ի փոքրն Լսիա մարթ է գտա-
նել զԲագրատունիս իշխանս և կալուածատէրոս
ընդ տէրութեամբ Տաճկաց, Էառաւիղ ցեղին
Բաղրատունեաց տիրեաց և Վրաց, և ի Հնգե-
սասաներորդում դարու՝ յերիս բաժանեաց
զթագաւորութիւնն, ի Քարթլինիա, ի Կախեթ,
և յԷմերկեթ, իւր առանձինն առանձինն տէրու-
թիւնք. առաջին երկուքն ի վերջին ժամանակս
դարձեալ միացան, այլ ի սկզբան այսր դարու
սորա հրաժարեցան յարքայական գահոյից յո-
գուտ Ռուսիոյ:

Կողմնակի շառաւիղք Բագրատունեաց գտա-
նին և ցայժմ ի Վրաստան, որպէս իշխանքն Մուխ-
րանսկի, Դաւիթիս — խվիլի, և Գոթգա — խվիլի:

Թագաւորք Վրաց միշտ ի հրովարտակս յիշէին
զժապանէ իւրեանց ի Դաւթայ (մարգարէէ) այս-
պիսի ի կիր առնելով բանս ի պուխս գրելոց.
«Մեր Լստուածային ողորմութեամբ արքայ ար-
քայից, ինքնակալ և անկախ թագաւոր, որդի
Յեսեսայ, Դաւթայ, Սողոմոնի և Բագրատայ, իշ-
խող եօթն թագաւորութեանց, Հերակլէս, և ին»

Մի ի նշանաւոր տոհմից Կովկասու են իշխանքն
Օրպիւեանք (Կովֆլանիս — խվիլի) և զժապանէ առ-
նուն ի Ճենաց, Ի ժամանակս Կայ — Խոսրովի ար-
քային Պարսից յառաջ քան զՍղէքսանդր մեծն
եկին բնակեցան ի Վրաստան և յանուանէ զըլ-
խաւորին նոցա Էպատայ կոչեցան Որպիւեանք
կամ Օրպիւեանք 59). յետ ժամանակաց հա-

որդւոյ Կոստանդեայ Կոմնէն Կոսթիւսոյ ի լոյս ընծ. Կ. Վ.
Շահնայ. Երես 109,

— «Յանժամ Հայոց բովանդակեալ:

«Եւ ի Տարսոն քաղաքն եկեալ:

«Կաթուղիկոսն ի մէջ կացեալ:

«Ձեկեղեցին անդ ժողովեալ:

«Եւ որինք զնա (Լեւոն) օծեալ:

«Տան Թորգոմայ Թագաւորեալ:

Վաճորմայ Դար. Ռոսն, Պատմ. Ռուբինեանց, Երես 215. ի
լոյս ընծ. Կ. Վ. Շահնայ:

(39) Ուրբեղեանք, հառաւած հզոր ազգին ձեռաց, եկեալք ի
ձեռնատանէ՝ անտի ի Վրաստան, կոչէին յառաջ ձեռա-

տուած ինչ Օրպիւեան տոհմի էանց ի Հայաս-
տան. և անուանիք զողով զտեղի գրաւեցին ի
պատմութիւնս երկրին: Սորա էին զխաւոր նա-
խարարք արքայից Վրաց և երկրորդ յետ արքա-
յական զերդաստանին համարեալք, յորմէ բա-
զում անգամ և զկին անէին. վերջին արքայու-
հին Էմերկեթի էր ի տանէն Օրպիւեան: Ի ցեղէն
սոցա էր Ստեփաննոս արքեպիսկոպոսն Սիւնեաց
ԵԺԴ դարու, որ զրեաց զպատմութիւն տոհ-
միս 40):

գուլք, այս ինքն ձեռացիք և անուանի գտեալք ժառանգեա
ցին զառաջինն զամուրն Ուրբեթ, յորմէ կոչեցան Ուրբուլք, այս
ինքն Ուրբեթեղք, և զկնի սասցան Ուրբեղեանք կամ Ուրբեղեանք:

(40) Շառաւիղք մեծանուն տոհմիս ցարդ կան և մնան ի
Սիւնիս արքայք յայս տէրութեանն և համազգեացն. ի լինելն
մեր ի վնա սրբոյն Ստաթէի յամի 1868 պաշտօնի փոխա-
նարդութեան Զօրի նորին, գտաք անգանոր զկոնդակ Կաթու-
ղիկոսին ամենայն Հայոց Տեառն Եփրեմայ, յորում շարակար-
գեալ էր զձեռնդարանութիւն ազգատոհմի Ուրբեղեանցն Սիւնեաց:
Ահաւսիկ զպատճէն յիշատակեալ կոնդակին առաջի առնեմք
ստատար յարգոյ ընթերցողիդ, որ է այս.

«Յիսուսի Քրիստոսի ծառայ Տէր Եփրեմ և շնորհիւ նորին
Կաթուղիկոս ամենայն Հայոց և ժայրազոյն Պատրիարք Առաքեա
լականի եկեղեցւոյ Քրիստոսէ, և Արարատեան գերագահ Աթոռոյ
սրբոյ Կաթուղիկէ Եփրեմեանի, ողոյն տամք Հայրապետական
բազմապատիկ օրհնութեամբ բարեպաշտութեան և քաջաշուու-
թեան շառաւիղ պայազատ իշխանին Հայոց պայծառափայլ մեծ
ծառու Եփրէ Մանուկարայ Յովսէփեան Ուրբեղեանց, և հարա-
զատ եղբարքդ ըստ մարմնոյ, Ռուպտամին, Կիւրային, և Ասորդն,
խնդալ ի Քրիստոս միշտ անընդհատ և արաւելեալ բարեմա-
նութեամբք:

Ընկալեալ ի 14 ամսեանն Մարտի այսր 1831 ամի, զիւրե-
ղիւր մեր առ մեզ և առ Սրբազան Սինոդն գերագահ Աթոռ-
ոյս մեռումբ Սրբազան Սինոն Արքեպիսկոպոսին Սիւնեաց
այնարհիդ, յաղաքս գտանելոյ և արաւազելոյ ի պատմագրաց
և այլոց թղթոց զհիշտ պատմութիւն ցեղին Ուրբեղեանց յորմէ
և զՍիւնեացդ Ուրբեղեանց, յոր անուն կոյի յատկապէս ազ-
գատում մեր, յանձն արարաք մեք Սրբազան Սինոդին և այլոց
գիտնականաց Աթոռոյս սրունել ի պատմութիւնս Հայոց և յայլ
գիրս կամ ի զիւսնագիրս Աթոռոյս և ի յիշատակարանս, և
որ ինչ կամ որչափ ինչ գտան, կցորդելով ընդ այնմ ի վերջոյ,
և զոր ունեաքն առ մեզ զշարակարգութիւն վերջնոցն ազգա-
տոհմի մերոյ զարտաճանեալն ի հրովարտակաց անտի շնորհելոց
պայծառ զարմի մերում յայլ և յայլ Թագաւորաց և իշխողաց
Պարսից. զորս մեք յամի 1818 յորժամ եկին յԱթոռս Եփրէ
Պոզոսն պապ եղբայր մեր, և Եւդրայի Մովսէսն պապ մեր,
տեսաք ալք ի մեռս նոցա և ընթերցան իսկ առաջի մեր:

Այսպիսի է և ծագումն Գաղիկոնեանց ի Հայաստան: Ի Թագաւորութեան Արտաշրի առաջնոյ Հիմնողի իշխանութեան Սասանեանց 240 ամօք յառաջ քան զԲրիտանոս, երկուք ի ցեղից արքային ձենաց Արնայ Պագորայ, (փոխանակ ասկոյ Արրոկայ ձենրակուր) Վուխ - Տոխ և Մամզոն զղպարտեալք առաջի Հօրեղծօրն իւրեանց

ահաւասիկ արձանացուցանելք ի Կոնգալի օտո մերում, և այնպէս մատուցանելք ձեզ, Արք ի պատմագրաց անտի Հայոց միայն Սիւնեացն և նոցին իսկ Ուրբեղեանցն, դասն և տեսան ճոխագոյնս զազգէն Ուրբեղեանցն ի յատուկ պատմութենէ անտի Ուրբեղեանց, որպէս և յայլ գրոց ըստ սովորագոյն մասին առեալ գրէ և Միքայէլ վարդապետն Չամչեան յընթաց պատմութեան իւրոյ, յորում ցուցանի յայտնի, թէ Ուրբեղեանք որք էին հատուած հոգր ազգին ձենաց, եկեալք ի ձենաստանէ անտի ի Վրաստան, և կոչէին յառաջ ձենակուրք այս ինքն ձենացիք, ծաղկեցան նախ անգէն ի Վիրա և անուանի եղեալ յոյժ քաղութեամբ և յաղթանակութեամբ, ճոխացան մեծամեծ պատուովք և արտօնութեամբք ի Թագաւորաց Վրաց, Ժառանգելով զառաջինն անդ զամուրն Որբէթ, յորմէ կոչեցան Նոքա Որբուլք այս ինքն Որբէթեցիք, յորմէ և Որբեղեանք կամ Ուրբեղեանք: Ապա իրեն հալածեցան Նոքա և կտորեցան ի Գորգեայ արքայէ Վրաց յամբ Տեառն 1177 ի պատճառս արքայորդոյն Վրաց Գեմալայի, որ հարազատ Ժառանգն էր Թագաւորութեան, Լիպարիտ միայն ի տոհմէ նոցին հանգերձ երկու որդուովք իւրովք Ելիկուման և Իւանէի: Գտեալ յայն Ժամ ի Պարս, զերժանի ի կտորածէ անտի, և իրեն նա վախճանի անգէն ի Պարս, Իւանէ որդի նորա վերակոչեալ ի Վրաստան ի Թամարայ Թագուհոյն Վրաց յամս 1184, պատուեալ մեծարի ի նմանէ, և Ժառանգէ ի հայրենի կարուածոց իւրոց միայն զամուրն Ուրբէթ, յորմէ ցեղեալքն կուցան և կոչին մինչև ցայսօր Ուրբեղեանք Վրաց: Իսկ Ելիկուման գտեալ շնորհս առաքի Ելզկուզայ մեծանուն հաղարապետին Պարսից Ժառանգէ զամրոցն Երնջուկոս հանգերձ քանի առանգ ի սահմանս հախիվեանայ, ուր ամուսնացեալ ընդ զստեր Արասա Հալիպուն իշխանին ծնանի զերկրորդն Լիպարիտ, այլ իրեն վախճանի ինքն, իշխանք Սիւնեաց զկին նորա և զորդին նորա Լիպարիտ փոխադրեն ի Սիւնիս անդր, ուր Լիպարիտ զարգացեալ հասանի յաւազութիւն մեծ ի ձեռն վերոյ անուանեալ Թագուհոյն, և ամուսնացեալ ծնանի զհինգ ուստերս, զԵլիկում, զՍմբատ, զԷւանէ, զԲախրատայ, և զՏարսայիժ: Ելիկուման ծնանի Բուռթիկ, իւսանեալ Լիպարիտ երրորդ և ի Տարսայիժայ Ելիկում երրորդ և Ստեփաննոս որ եղև Արքեպիսկոպոս Սիւնեաց և Փախրատայ, և սորա այսպէս ցեղեալք ի մէջ Հայոց աշխարհին Սիւնեաց, ասացան Ուրբեղեանք Սիւնեաց, որք յաջորդութեամբ ունէին զաւերութիւն աշխարհին Սիւնեաց, յորս երևելի եղև յոյժ քաղն Սմբատ որդի Լիպարիտայ, և յետ նորա Տարսայիժ եղբայր նորին և զկին որդի Տարսայիժայ

փախեան ի Պարսս 41): Արրոկ արքայ Հրեշտակս առաքեալ պահանջէ տալ զնոսա ի ձեռս իւր, այլ Արտաշրի մերժեալ զննզիր նորա առաքէ

Ստեփաննոս Արքեպիսկոպոս Սիւնեաց որպէս և Յովհաննէս Ուրպէն կոչեցեալ Արքեպիսկոպոս Սիւնեաց, յետ Ստեփաննոսի ի նմին զարմէ, որ և անուանի եղև յառաջ կաթուղիքս ստեփաննոս Անաւարդեցոյ, որ եկաց ի Հայրապետութեան զամս էրբև ԺԳ. ցամ Տեառն 1367. ըստ այսմ է պատմագիրս անդ պատմութիւն Ուրբեղեանց ընդհանրապէս առեալ, և մինչև ցատտ պատմութիւն Սիւնեացն Ուրբեղեանց մասնաւորապէս առեալ, այս է մինչև ցեղեղքն շրջատասաներորդ զարուն. ըստ որում տեսանի ի պատմութեան անդ Չամչեանին հառ. Գ. Թղթահամար 148, 149, 218, 219, 280, և 304 եւն: Արտաշայ այսորիկ Սիւնեացն Ուրբեղեանց իւր ց200 ամաց հետէ և այս տեսանին յիշատակեալք շարունակաբար ի նախազրեալ հրովարտակս իւրեանց և ի պարգևագիրս տուեալս նոցա ի Թագաւորացն Պարսից Ծահ - Սէֆիէն առաջնոյ, ի Ծահ - Սիւլեյմանայ, ի Ծահ - արապայ ի հատր - շահայ և յայոց, և ի Փանս - Խանէն Ղաւապադու, և յորդայ նորին յեղբարհիմ Խանէն, և յորդու Խալահիմ Խանին ի Մեհտի Ղաւէի Խանէն, որ կայ այժմ կենդանի: Իսկ Ծահ - Սէֆի Ա. Թագաւորեաց յամբ Տեառն 1629, յորում զարու տեսանի ծաղկեալ ի զարմէ անտի մերմէ անուանին Մեկէ Մանկասար, և յետ նորս որդի նորին մեկէ Մովսէս, ապա որդին մեկէ Մովսէսի մեկէ Բարայ, յետ մեկէ Բարային որդիք նորին մեկէ Մանուշարն և Գոչին, ապա որդիք մեկէ Մանուշարին մեկէ Պողոս երևելին և Եւաղբայի Մովսէսն, որ զկին մահուան եղբոր իւրոյ, և նա ընկալու զանուն և զիշխանութիւն մեղիւթեան, ի մեկէ Մովսէսէ Մանուշարեան ծնանի հանգուցեալ հայրն մեր Յովսէփ բեկ և ի նմանէ դուք, յորեկին հարազատք նորին Մեկէ Մանուշար, Ռուստամ, Միկաիլ, Աբի. այս է հաւա պատմութիւն Ուրբեղեանցն և ազգատոհմն ձերոյ, որք ի նոյն անուն կոչին Ուրբեղեանք, որպէս ի վերոյ նշանակեալ հրովարտակս մեր, թէ ի նորս և թէ ի հին տեսեալ է մեր նոյնպէս կոչիլ ազգատոհմն ձերոյ ըստ արտաբերութեան Պարսից Ուրբեղեան այս ինքն է Ուրբեղեան: Առ որ ի հաւատութիւն պատմութեանս յետ ստորագրելոյ մեր զոյն, տուաք կնքել և ստորագրել և զերապատիւ Անդամոց Սրբազան Սինօգին զերազահ Աթոռոյս, յամսեանն ի Մայիսի 1. յամբ 1831. ի Ս. Եմմաժին. համ. 180:

ԿԱԹՈՒԴԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԵՓՐԵՄ.

Տեղապահ Մարտիրոս Արքեպիսկոպոս, Սահակ Արքեպիսկոպոս. Ստեփաննոս Արքեպիսկոպոս. Աւագ Լուսարար Գեղամանց, Գրիգոր Արքեպիսկոպոս Հայոց Երեւանայ, Ստեփաննոս Արքեպիսկոպոս տեղապահն, Բարսեղ Արքեպիսկոպոս. Յովհաննէս Վարդապետ Ղլիմեցի, Դուկոս Վարդապետ (41) Ոչ թէ ըստ անեղոյ արդոյ հեղինակին երկուք էին որք փախեան ի Պարսս, այլ որպէս քերթողահայոյն Մովսէս Խորե-

զնոսա աղխիւք հանդերձ առ գործակալ իշխանս իւր ի Հայաստան 42)։ Մամիկոնեանք փութով յայտնի եղեն աշխարհին. նախ զառաջինն թափառական վարեցին կեանս, այլ զկնի Մամիկոն ի ձեռս երեք զերկիրսն Տարուբերան և զՏարօն, ուր սպան զՍղուկ նահապետ Սղուկունեաց. յայնմ ժամանակէ հետէ եղեն նոքա զօրավիդն արքայից և պաշտպան անկախութեան Հայոց. իսկ զկնի քրիստոնէական հաւատոյ ընդդէմ մոգութեան, որպէս Օրպելեանք ի Վրաստան, սոյնգունակ և Մամիկոնեանք ի Հայաստան են առաջին նախարարք Հայոց նաև մինչդեռ էին ընդ տէրութեանմը Սասանեանց յիննբորդ դարու. — Մամիկոնեանք ի մեռանելն ամբողջեալ լինէին ի Գլակայ վանս Տարօնոյ։

Յառաջադէմ տոհմն Մանեկղեան որ գտանի ի Քիւրտիստան, յառաջ գայ ի ցեղէն Մամիկոնեանց. (տես Բիստէր. հատ. Ժ. երես 584) 43)։ Հաս-

նացի պատմէ, Մամիկոն չարաքանեալ առաջի Արբուկայ արքայի հօրեղբոր իւրոյ ի ձեռն եղբորն իւրոյ Բղդուխայ, փախուցեալ անկանի առ Արտաշէր արքայ Պարսից. և Ախ - զօխտ անուն, զոր ի մէջ բերէ մեծաբոցոյ հեղանակն, Բղդուխն է, աղաւաղեալ։

(42) Նորենացին զեւթէ ոչ հրեշտակա առաքեալ Արբուկայ առ Արտաշէր, խնդրէ առ զՄամիկոն. իսկ ի շտեմալ նորա, խաղաց զօրոց ի վերայ նորա. այլ Արտաշէր մեռեալ, Թողու զթաղաւորութիւնն որդւոյ իւրում Շապուհ — որ լկամեցեալ առ զնա ի ձեռս Արբուկայ, առաքէ ի Հայս, և այսու զօրք չափէ Արբուկայ։

(43) Մամիկոնի անուամբ յայտնի է այս տոհմ ի Քիւրտիստան և են թաւով հարիւր երեսուն տան չափ, արք. քաղ. կորովք և ահարկուք չրխանակ զիւզօրէից, Ռիտդէր ընդ որում և մերս հեղինակն փոխանակ Մամիկեան կոչելոյ զնոսա, յորմէ յայտնապէս և Մամիկոնեան, աղաւաղեալ զենն Մանեկղեանս Բղդաի պարսաւանաց և յանգիւստութեան արժանի եմք մեք, որ ցարդ և ոչ զանէ զմտաւ ամենք զմի կամ զերկու մանկունս ի տոհմէ աստի ի ձեռս բերեալ առ կանոնաւորն կրթութիւն, և այնպէս կենդանածնել ի մեզ վերադին չառաւիղս նախնադոյն և աղեւաւորք տոհմի միոյ, որ մեծամեծ սխրագործութեամբքն և քաջարի բարեմասնութեամբն հանդիսացեալ է ի բաղում նոսազս պաշտպան հաւատոյ և փրկիչ Հայրենի աշխարհի. ըսյց թուի թէ ի զուր զյեղիս տաղտկացուցանեմ ընթերցողին, թէ մեք փոյթ այսպիսեացս և հոգ տանող էաք ազգայնի պարտականութեանց, առաւաթիկ են քեզ ի Նիլիկիա չառաւիղք կամ արեւակիցք Ռաբենեան թագաւորաց և ազ-

տատեն թէ մեծ մասն իշխանացն ցեղից Առվկաստու զծագումն առեալ է յԽտալացւոց. իրր թէ զաղթեցին նոքա ի կողմանս յայտնիկ ի Ժամանակս տիրապետութեան Գնուաւացւոց. զօ. Յիցք (այժմ իշխանք Յիւլիանովք) եկեալ թուին ի Լոմպարտոյ. ևն. Ղաւարիայ են Աոմսք մի և նոյն անուամբ, տոհմն Էնդրօնիկայ - խմիլի ծագի ի Բիւզանդեան կայսերէն Անդրօնիկոսէ ի ցեղէ Աոմենեանց։

Ի 24-ն Օգոստոսի զկնի ճաշուն ընդ երկուց ուղեկցաց իմոց դէմ եղաք երթալ ի համալուսւոր ուխտաւայրն Մարկոփի հետի ի Տփլիսոյ քանի մի մղոնօք. ի ճանապարհին պատմեցին մեզ զհետեւեալ աւանդութիւնս ի վերայ Ս. Գրիգորի Քրիստոնէութիւնն արդէն ի չորրորդ դարու յայտնեալ էր ի կողմանս Առվկաստու, այլ ոչ ծաւալիւր փութապէս. ըսա որում շրջաքնակ հետեւնոք անարգէին և հալածէին զՔրիստոնեայս. ի սկզբան վեցերորդ դարու առաքեցան ի Բիւզանդիոյ ի կողմանս յայտնիկ երեքտասան սուրբ անձինք մեծաւ մասամբ Ասորիք, ուսուցիչք Քրիստոնէութեան. և առաջնորդ նոցա էր սուրբն Գրիգոր. յայտնիկ աւուրս կռապաշտ իշխանն Աստի թայր պատերազմ ընդ Վրաց, և պաշարեալ ունէր զքաղաքն Գրեմի. ուստի Քրիստոնեայք կրէին մեծամեծ նեղութիւնս. զոր տեսեալ Ս. Գրիգորի հարկեցաւ զողել յանտառս. — Յաւուր միում յեկանել իշխանին յորս՝ բազէ նորա պնդեալ զհետ աղանոյ միոյ անյայտ եղև, որք ի խոյզ և ի խնդիր կրթեալ էին բազէին, գնան պատմեն իշխանին. թէ գտին յանտառի զայր ոմն, յորոյ աջոյ ծունկն նստէր աղանին, և յահակն բազէն. առ ի ստուգել զիրսն՝ իշխանն ինքնին դիմեաց անդր, և եզիտ այնպէս. տեսեալ

նուախրտ իշխանաց իճարօն Մամիկոնեանց, յԱրշարունիս Վամարականաց, ի Սիւնիս Որբելեանց, ի Վապան Գարսաղանեանց, և յայլ ուր այլոց բազմաց, ոմանք նախորդք, ոմանք քրտնամալ ողորմելի երկրագործք, այլք աւուրն պարենի կաթօ մշակք ևն. Նրբ արեւոք մի ոք ի մէջ ի յուշ էած թէ արժան է կենդանածնել յազգի զլքեալ և ի դառն մեռացման հասեալ տոհմս այնպիս յայտնիս ի պատմութեան աշխարհին և բարեաց պատճառս ի ժամանակին։

զիշխանն նորա բնութեան, խնդրեաց բժշկել զորդին իւր. որ կաղացեալ էր ի մանկութենէ հետէ. և ասէ « եթէ տեսից այսպիսի հրաշս՝ եղէց Քրիստոնեայ և փառաւոր արարից զԱստուած » ։ Խոստացաւ սուրբն աննել ըստ բանի նորա. և յորժամ դարձաւ ի տուն, ընդ առաջ և նմա որդին առողջացեալ ։ Յայնժամ առեալ իշխանին զամենայն բազմութիւնն, չորաւ առ սուրբն և խնդրեաց առնել զնոսա Քրիստոնեայս. և յորժամ ամբօխն մկրտեցաւ, հոս սուրբն իշխանին զեղջիւր զինւոյ ասելով « Լւս-Վէր-Բէ » (Աստուած ետ), և ամբօխն աղաղակեաց « Ե-Ե-Ն-Ե-Ն-Ե-Ն » (բարի ծանապարհ) ։ աստի սկիզբն եղև կիրառութեան զինւոյ ի Վիրս, որ մինչև ցայս վայր չէր գործադրելի. այժմ իսկ՝ եթէ ի Վրաստան տան ումեք զզինի, ասեն « ալլա՛հ վէրտի » ։ և նաև շինեալն ի Վրաց ի յիշատակ այսր մենաստան էառ զանունս Ալլահ-Վէրտի ։

Յետ ընդունելոյ Վրաց զքրիստոնէութիւնն՝ եկեղեցի նոցա ընդ իշխանութեամբ եկաց Պատրիարքին Վ Պօլսոյ, զինի Անտիոքայ, և ի վերջոյ անկախ՝ կարգեալ ինքեան զկաթողիկոս 44) ։

Պայծառ էր օրն, և ծանապարհ մեր շրջապատեալ լերանք և անտառօր, ընդ վայելչազարդ

Հովիտս էած զմեզ ի հիւսիսոյ ի հարաւ. հասար փութապէս ուխտագնաց բազմութեան, ընդ որս չորքաք ի Մարկոփի, և հանգիստ կալաք ի խրճճի շինականի ուրումն. զիշիր պայծառ, օդ ջերմ, ամառնային, լոյս լուսնի, աստեղաց և հազարաւոր լուցեալ խարուկաց վրանաց, երգք, ուրախական աղաղակք, և օտար Եւրոպացի լսելեաց փող Վրացի (զուռնա), թողին ի մեզ անբացատրելի տպաւորութիւն. — Յառաւօտու վեց ժամուն ընդ բազմաթիւ ուխտաւորաց չորքաք յանտառս և ի լերինս. Վրացի իշխանք յազգային տարաղս և ի շողշողին փաղիին զէնս վառեալք, կանայք և աղջկունք նոցա ի ձիւնըստեալք, յուշ առնել տային զմեծահանդէս տօնս միջին դարուց. քաղցր էր տեսանել, թէ զիարդ զարդարուն մարդակոյտ բազմութիւնդ այդ, որ Եւրոպացւոյ աչաց առաջի նկարագրէր զԳօրած ձեմն Հռովմայ, երբեմն անհետանայր, երբեմն երևէր ի մէջ կանաչազարդ դալարեացն. շատք ի նոցանէ մանաւանդ կանայք և աղջկունք, բոկոտն ելանէին ի զլուխ լերին, ըստ որում ուխտեալ էին. Յետ կէս ժամու հասար ի կատարն, ուր լացան առաջի մեր թանձրախիտ անտառ, և յաջակողմն ի բաձր բլրոջ աւերակք, նպատակ մերոյ ծանապարհորդութեան. իբր քառորդ ժամաւ հեռի ի մէջ, ուղիղ և անցուկ անցիւ հասեալ անդանօր, տեսաք աւերուն վանք, եկեղեցի և ամրոց. վանքն և եկեղեցին հիմնեալք ի Ս. Անտոնիոսէ յամէ 1740 թ 1750, որ մի էր յԺԳ առաքելոց կամ քարոզչաց Վրաստանի, աւերեալք են ի Լեզկեաց, բայց որպէս Վիրք ասեն, անմիջապէս ստացեալ են նոքա զպատիժ պատուհասի յանցանաց իւրեանց. այն է յորժամ ի դարձին դան անցանել առ ստորոտով լերին, լեռն փլուզանի իսկոյն և սպանանէ արս մինչև հինգ հարիւր ։

Եկեղեցին իսպառ կործանեալ էր զրեթէ, բաց ի կամարացն դասուն, ուր պատրաստեալ յայնժամ սեղան կատարէր պաշտամունս քահանայն զգնտաւորեալ ։

Որ ժողովոյ, որ ընկերացեալ ցնդի ուխտաւորաց հանդիպեալք, հրաւիրէին զմեզ ուրախերս յուտել և ի յլմպել ընդ նոսա. այլ մեք յար-

(*) Գուցէ զիտի լինէ Կախի օլ (բարի — կամ օղլ լեր), որ պատասխանն յարմար քոյ էրր թէ շնորհակալութիւն յայտելով ։

Կախ. Խմբ.

(44) Եկեղեցի Վրաց ի սկզբանէն անտի մինչև ցաւորս Մովսիսի Կաթողիկոսի ընդ իշխանութեամբ էր Հայրապետին Հայոց, և եպիսկոպոսունք Վրաց ի Հայոց Կաթողիկոսէն տառաւորն զՆեաւազարութիւն և վիճակ, որպէս և Աղուանիցն. իսկ յաւուրս Մովսիսի Կիւրոս անուն ամէն, զոր Ստեփաննոս Արքեպիսկոպոսն Օրբելեան ս կարապետ նեոխն ս անուանէ, մեռնադրեալ ի նմանէ եպիսկոպոս և ընկալեալ զտառապետութիւնն Վրաց, ընդվզեալ ի բաց եկաց յիշխանութենէ կաթողիկոսին Հայոց, և աստի սկիզբն եղև բաժանման Վրաց. զայս միայն համառօտի յիշեցեալ կամեցայ ցուցանել թէ, արքայ Եւրոպացին մեր Հակոբ - հաւաքն սխալի ասել ոյստ ընդառնելոյ Վրաց զքրիստոնէութիւնն, եկեղեցի նոցա ընդ իշխանութեամբ գաւառ Պատրիարքին Կ. Պօլսոյ. զինի Անտիոքայ և ի վերջոյ անկախ « ։ իսկ թէ քեզ ընթերցողիդ կամ է գանթերի պատմութիւնս իրացս գիտել, կարեն դառնալ ի պատմագիրս ժամանակակիցս ։

գեցաք զհրաւերն Պ. Գողամովի նահանգա-
տուհի կողմանց. արկին մեզ ընտիր օթոցս, եկին
հետզհետեւ ուսումնականքն, և բազմեցաք շուր-
ջանակի. նախաճաշիկ մեզ ետուն հաց, պանիր,
և քանի մի կտոր ի շամփուր խորովեալ մսոյ ոչ-
խարի. մատուցանին (թամարա) ծաղրական զիմօք,
և զինչոյ գաւ ի ձեռին գայր հասանէր առ մեզ
ստէպ ստէպ, և հրաւիրէր յրմակ. զզինին ըմ-
պէին մեծաւ մասամբ կամ արծաթեայ եղջիրօք
կամ արծ. մեծ զրդալօք (հաղարափեշայ), որք
նման են շերեփաց մեր սեղանաց. եկին առ մեզ
ապա կրկնք Վ. րաց, և կրգէին մերթ մին՝ մերթ
միւսն, մերթ ամենեքին ի միասին. իշխանն և բազ-
մականն, իրք զրաւեալ ի սրտաւուչ կրգոցն իւր-
եանց, երբեմն և ինքեանք ձայնակցէին նոցա. —

Յարուցեալ աստի՝ չորաք առ այլ ժողովս, ուր
կարաւէին աղջկունք Վ. րաց, կրգեհոն կամ այլ
ինչ ոչ գոյր ի նոսա, միայն ծափահարութիւնք և
փոքրիկ թմբուկք զխաղն փառաւորէին: Յայ-
լում տեղոյ պարէին 13 — 16 ամեայ պատա-
նիք, որք ընդոտա բարձրացեալ նստէին ի վերայ
ուսոց չափահասից արանց, և վերջինքն նոքօք
հանկերձ պարէին յոյժ յաջողակ. իսկ պատանիք
նոյնպէս պահպանէին զհաւասարակշռութիւնն,
զի ոչ օք անկանէր ի վայր, և այլ պէսպէս խաղք.
այլ սակաւ առ սակաւ ներդործութիւնք զինչոյն
երեւեցաւ, ազաղակ ամոթխն բարձրացաւ, ազ-
նուական կանայք թողին մեկնեցան, և մէք դար-
ձաք ի տուն ի Տփլիս:

Արշափ արհեստք են ի Տփլիս, իւրաքանչիւր
արհեստի հետեողք ունին զիւրեանց էանաֆս.
Հանգոյն նմին, որ ի միջին դարս ի Գերմանիա զը-
տանէր. բայց տեղոյս էանաֆութիւնն յառաջ
եկեալ է ի Պարսից ըստ Պարսկականին, յաւուրս
տիրապետելոյ նոցա Վ. քաստանի. ո՞վ կարէ լու-
ծանել զպատմարանական խնդիրն, թէ արդեօք
խաչակիրք տարան ի Գերմանիոյ յԱսիա զէս-
նաֆութիւնն, եթէ Գերմանացիք բերին ընդ
իւրեանս ի հնոց անտի յորժամ բաժանեցան ի
Պարսից, Վ. րաց, Ռուսաց, և Հայոց էանաֆու-
թիւնն ի միասին են, իսկ Թուրքացն առանձին.
որ երեւի յառաջ եկեալ ի տարբերութենէ կրօնի.
Իւրաքանչիւր էանաֆ ունի զղխաւոր իւր (ուստա-

րաշի), և երկուս օգնականս նմին (ախախկալ *).
յորժամ գործ ինչ հանգիստ էանաֆին, զորմէ
պարտ է խորհել ընդ զխաւորին և օգնականացն,
ժողովին ի գաւթ եկեղեցւոյ, և վճիռ կամ դա-
դաստան առնեն զխաւորն և օգնականքն իւր.
եթէ դատաստան նոցա անհաւանելի թուեցաւ
էանաֆին իւրեանց, կարեն մերժել զայն, այլ
պարտին ամենեքին ի մի լինիլ կարծիս. ընդ դա-
տաստանաւ սոցա անկանին վէճք ի մէջ արհես-
տաւորաց միոյ էանաֆի, պահանջ պարտուց, տըր-
տունչ հասարակաց զոչ բարեօք աշխատելոյ ար-
հեստաւորաց, ևս և եթէ յառաջագոյն զիրամն
առեալ, զգործն թողեալ են ընդ երկար անա-
ւարտ, և այլ անբաւականութիւնք, կուրք և լին.
ծանր գործն վճռի քաղաքական տեսչութեամբ:
Իւրաքանչիւր էանաֆ ունի առանձին օրինադիրս,
կօշկակարացն էր յաւուրց անտի Հերակլիայ, այլ
զկնի փոփոխեալ էին ըստ կամս. որ ծանուց
յանցանաց ցուցանի տէր, յետ զեղեալն ի վերայ
նորա գործս հատուցանելոյ՝ պարտի նաւ կոչունս
խրախանաց առնել իւրոյ էանաֆին, իբր ի վարձ,
զի կորուսն զժամանակս յառնել զդատաստան
նորա. զխաւորն նոցա ունի իրաւոնս բաց ի
վարձատրութենէն, պահանջել ի նմանէ իբրեւ
տոյժ 30 ր. միայն գանել կամ պատժել զօք
չկարէ. այդ գործ է միայն քաղաքական տեսչու-
թեան. իսկ ի դէպս դէպս թեթեւադուրից սխա-
լանաց ապուկօք խրատէ. տուժից զրամք մտա-
նեն ի գանձարան էանաֆի. յառաջ ժամանակաւ
զրեթէ ի կորուստ երթային, այժմ խիստ հայե-
ցողութիւնս դարձուցանեն ի վերայ նոցա, և ի
գործ դնեն ի պէտս չքաւորեալ արհեստաւորաց.
Հիւանդաց, և լին Վ. կրջին թագաւորն Վ. րաց կանո-
նեաց, զի էանաֆն խնամեցէ զաղքատ անդամս
իւր. և զխաւորին տուեալ է իրաւունս յայսպիսի
դէպս ժողովել յիւրոցն զառանձին տուրս. ի սո-
ցանէ պահանջի զխաչարկ և զանազան տուրք ի
պահպանութիւն և ի ծախս կամրջոց ճանապար-
հաց և բոստի. ի փաճառողաց ջեուրցիչ ըմ-

(*) Ախախկալ կամ Ագասխալ, կը քաղաքական տեսչութիւն
մօրտէք կամ տէր. փերունի

պիկիս առնուն 83 ր. վասն ամբողջ ամի. Հայք և Վիրք յերկուշարսթեոնն ոչ պարապին աշխատութեամբ, զի այդ դատաստանական օր է էսնաֆին նոցա, իսկ Թաթարացն՝ շարսթ:

Ի ժամ յուղարկաւորութեան մեծի ումեք զհետ գնան և էսնաֆք, կրելով երբեմն գրօշ կամ նշանս իւրեանց. իսկ Հայ և Վրացի կանայք ոչ կրէք զհետ ընթանան մեռելոյն. և բարկեամ կամ ազգական հանգուցելոյն տայ գրխաւորին նոցա դրամ ինչ հիւրոյթս առնել էսնաֆին ի յիշատակ հոգւոյ հանգուցելոյն:

Աշակերտ արհեստաւորին առ ի ստանալ իրաւունս քաջահմուտ արուեստադիտի, ածի ի ժողովն էսնաֆաց, հատուցանէ նոցա 10 ր. որ արկանի ի գանձարանն, և խնջոյս կազմէ. յետ ի խնջոյիցն յառնելոյ, հրաւիրեալ քահանայն օրհնէ զնոսա, և զխաւորն (ուստարաշին) ածէ ապտակ յերես նորա, և այնուհետեւ համարի մի ի նոցանէ:

Դէպ եղև ինձ քանիցս անգամ տեսանել ի փողոցս Տփլիսոյ զվաճառական Հրեայս. մի ի նոցանէ զգեցեալ ունէր զԵւրոպական տարազ, ընդ որ խօսեալ ի լեզու Գերմանական, իրազեկ եղէ՝ զի էր յԱւստրիոյ, որ անցեալ ընդ Գալիցիա, Պոդոլիա և Օտեսայ, եկեալ էր ի Տփլիս. զսաբաղում անգամ հրաւիրեալ առ իս տեղեկութիւնս ժողովէի ի վերայ Հրէից բնակելոց ի Վովկաս, ըստ այսմ և յորժամ էի յԵրևան. Վարայիմ ամն ծանօթացեալ ընդ իս տեղեկութիւնս բազումն ետ ինձ ի վերայ Հրէից. զորոց ահա մեք համառօտիւ ի մէջ բերեմք բանս, զհարուստն այլոց թողլով հետազօտութեանց:

Թափառող Հրեայք ի Գերմանիոյ, հանգոյն վերոյիշատակեալն իմոյ ծանօթի սակաւք են յոյժ. իսկ որ ի Լեհաստանէ, ի Պոդոլիոյ, ի Վիսլայ, բազմաթիւ են, և զիւրին է որոշել զնոսա ըստ զգեստու. սորա ժամանակաւոր բնակին ի սահմանս յայտոսիկ, բայց և բազումք այնք են, զի ուսեալ զլեզուս տեղականս, հաստատուն բնակութիւնս առնեն:

Գործածական լեզու, որով խօսին ընդ իրեարս, է աղաւաղեալ Գերմաներէն: Հրէայք տեղոյս բաժանին ի հետեւեալ կարգս այսպէս.

ա. Թաթարեանք (45) տարածեալք յամենայն ազգս Վովկասու ի հարաւ. բայց չգիտեմ թէ ի սոցանէ դտանի՞ն և առ լեռնականս, Չերքեզս, Լեզգիս և ին. պարապին յամենայն տեղիս առևտրով. ասի թէ ունին և առանձին աւանս և գեօղս ի հարաւային Վրաստան. բաց ատեցեալք են ի մերձակայ բնակչաց:

բ. Վարայիմք կամ հետեւողք հին Վտակարանի. ընդունին զհնազոյն աւանդութիւնս և զվարդապետութիւնս Հրէից, այլ ոչ զԹաթարս. բնակին գլխաւորապէս ի սահմանս Երևանայ և Ախալցխոյ. սորա հաստատուն ունել զծագումն անխառն յայլոց, ի ցեղէն Յուդայի որ առ Վերոսիս գերեցաւ ի Բաբելոն. որոց մի մասն դարձաւ վերստին ի Հրէաստան, մասն ինչ մնաց անդանօր. և յաւերիցն Բաբելոնի վանեալք են ի հիւսիս. իսկ ի վերջոյ գաղթեցին ի Հայաստան. անտի մասն ինչ ի Վովկաս, ի Խրիմ, ի Լեհաստան և ի Գալիցիա. հաստատուն ևս թէ ինքեանք մեծամեծ իրաւունս և իշխանութիւնս ի ձեռս բերին ի Հայաստան, այն է թէ արենակից նոցա տոհմն Բաղդատուշի, որ ի վերջոյ ասացաւ Բագրատունի՝ յառաջ եկեալն ի Շամրատայ, որ ի ցեղէն Դաւթայ, և առաքելոյ ի նարոգորոնոսորայ ի Հայաստան, ընկալեալ զՔրիստոնէութիւն տիրեաց Սպեր երկրին. ի սկզբան էառ զարտօնութիւն թագադրութեան արքայից Հայոց, զինի ամբարձաւ ի գահոյս նոցա, ընդ որ ի վերջին ժամանակս միացոյց վերիս աթոռս թագաւորութեան Վրաց. Վարայիմք համարին բարիք, ճշմարիտք և հաւատարիմք (յառևտուրս). որչափ ատելի են Թաթարեանք՝ այնչափ յարգոյք են առաջինքն. զիւնուն ըստ Տաճկական ձևոց, այլ զանազանին ի նոցանէ թողլով զՊասկենպօրտ 46). սովորական լեզու խօսից ընդ մէջ իւրեանց է Տաճկերէն: Ի Թաթարեանց խորշին. Մահմետականք համարեն զնոսա արինակիցս և ասեն թէ ուսուցիչ Մահմետի էր Վարայիմ. ուրում ետ Մահմետ զՏրոփարտակ յարգելոյ զՎարայիմս. զոր ընդունեն հետեւողքն իւր: Սորա

(45) Ընդունողք և հետեւողք Թաթարս մասեակի:

(46) Մի ի տեսականս թողլոյ ցմբուս և Պասկենպօրտէ ձևն, որ է զմէջն գերմուլ, և զերկու կողմանս Թաթար:

խաղաղութեամբ բնակին ընդ Բրիտանիայս, և հաւատան թէ Յիսուս Բրիտոս էր մարգարէ ի ցեղէ նոցա, միայն աշակերտք նորա հիմնեցին զնոր կրօն. ի սոցանէ նուազ մասն ինչ մնաց յԵրուսաղէմ. այլք ամենայն յարարերութիւնս ունին ընդ նոսա և ճանաչեն զնոսա զխաւորս և նախապատիւս քան զինքեանս. ի նշանակեալ աւուրս, զխաւորապէս յորրաթու Վարայիմ Երուսաղէմի ժողովին ի հարաւակողմն լինին Վարիայ, զի ի նմին տեղոջ, ուր հարք նոցա երգէին զօրհնութիւնս Աստուծոյ, և ինքեանք երգեսցին զերգս տրամականս և ողբասցեն ի վերայ աւերեալ տաճարին և քաղաքին սրբոյ, և բաժանման և տառապանաց ընտրելոյ ժողովրդեանն Աստուծոյ Իսրայէլի. Ահա ի մէջ բերեմք զայս երգ տխրական, որ ըստ պարզութեան և իմաստիցն, յուշ առնէ զողբս Երեմիայ մարգարէին.

Վարին ասէ, և ժողովուրդն պատասխանէ.

Երգ առաջին.

Ձայն.

Պատասխան.

Ա. Յաղագս արքունեացն կործանելոց.
 Բ. Յաղագս խաբարեալ տաճարին.
 Գ. Յաղագս պարսպացն որք անկան տապալեցան.
 Դ. Յաղագս շնչելոյ փառաց մեծութեան մերոյ.
 Ե. Յաղագս մեծի պատուարին, որ յաւերակս.
 Ն. Յաղագս պատուական տկանց, որք քոյ մատնեցան.
 Է. Յաղագս մեղանչական քաճանայից մերոց.
 Ը. Յաղագս Բաղաւորաց մերոց, որք անգուշեցին զնոյալս.

Նստիմք յանպատի
 Եւ
 ողբամք.

Երգ երկրորդ.

Ձայն.

Պատասխան.

Ա. Ազայեմք զրեզ, ողորմեա Սիօնի.
 Բ. Մի յապաղիր ձեր փրկել զՍիօն.
 Գ. Քաղաւորեացէ ի Սիօն մեծութիւն եւ փայլութիւն.
 Դ. Դաւազան արքայական, երեւեսցի փութով ի Սիօն.
 Ե. Տիրեսցէ Սիօնի խաղաղութիւն եւ ինդութիւն.

Ա. Ժողովեա զորդիս Երուսաղէմի.
 Բ. Հայեաց ի սիրտ Երուսաղէմի.
 Գ. Հայեաց ողորմութեամբ յերուսաղէմ.
 Դ. Մի՞թարեա զարգաւորս Երուսաղէմի.
 Ե. Ուրախ եղիցի Երուսաղէմ.

Ժ. Ուրեանք. ասի թէ ոչ հեռի ի Դերբենդաց բնակի ազգ ինչ քրիստոնեայ Հրէից. որք դար-

ձան ի քրիստոնէութիւն, պահելով ամբողջ զՆրա յայտնան իւրեանց օրէնս նախկինս. Արաւ հաւմարին մնացորդք ի ցեղին Բենիամինի. պահեն զՀարաթն, և զՀին օրէնսն զգուշութեամբ, վասն այն, զի Բրիտոս, զոր ընդունեն Մեփա, զնոյն արար ասեն, և աւանդեաց առնել. դպիրք սոցա, (ասեն) ի ժամանակս ծննդեան Յիսուսի Բրիտոսի քարոզեցին թէ Մեփայն ծնանելոցն է ի Բեթղեհէմ. և առաքելցին յինքեանց արս երկուս, զՂուսգին և զՆղիայ, որք համարեցան ընդ եօթմանասուն աշակերտսն Բրիտոսի. և զինի խաչելութեանն և յարութեան դարձ արարեալ առ նոսա բերին զճանդերձ Փրկչին, որ մինչ ցարդ պահպանի յեկեղեցւոյն Մցխեթի, ոչ հեռի ի Տփլիսոյ, Ղուսնին զրեաց զվարդապետութիւն Փրկչին ի մատեան մի, որ գտանի իրր թէ ցայժմ ևս առ նոսա, զոր պահեն յոյժ առանձինն, և ոչ խոտառումնին զնոր կոռակարանն, Եթէ է արդարեւ պայտիս աղանդ ինչ, ցանկալի էր մանրաքննին խուզարկութիւնս առնել, թէ և զժուարին և հասու հասու լինել ճշմարտութեանն.

Բայց թէ պայտէս թէ պնայէս, ճակատագիր Իօրացէլեան տոհմին կայ մնայ անլուծանելի խնդիր պատմական. Ուրեանք երևին տարածեալք ի համօրէն Ասիա, և մեծազոյն մասամբ ի Վովկատ, թէ և այժմ սակաւաւորք են աստանօր.

Ի պատմութեան Վրաց Վախթանգայր (տես Բլաւփրոթ ԺԱ. երես 87) ասի թէ 3360 ամբ յետոյ քան զնախատեղծն Ադամ, քաղւմք ի Հրէից, անուանեալք Ուրեանք կամ Ուտեանք ի Բարեկոնեան գերութենէ փախուցեալք անկան ի Վիրս բնակեցան առ Սնով գետակաւ, և հարկս հարկանէին վասն երկրային բերոց, Ռիդաեր, յաշխարհագրութեան հատ. Ժ. երես 588 զնէ թէ թագաւորն Պարսից ի հինգերորդ դարու տարաւ ի Հայաստանէ ի Պարսս 71,000 զերգաստանս Հրէից.

Պ. Վրիտէ, զորմէ յիշատակեալ եմք ի վեր անդր, տայ մեզ զհետեւեալ տեղեկութիւնդ. Ե. Եորժամ Մահմետ ջանայր սրով և բռնութեամբ տարածել զուսումն իւր ի համօրէն աշխարհ, մեծ մասն բնակեաց հարաւային Արարից կին աշակերտք և հետեւողք օրինացն Մովսիսի.

և զի օրէնք Մահմադի քաղաւածք էին յօրինաց մեծի Մարգարէին, վասն որոյ զիբաւ ընկալան զայնս բնակիչք երկրին. պատմութիւնն ցոյցանէ թէ ցեղքն Բենի - Հարրի Անկիւ, և Բենի - Հա- խար, որք բնակեալ էին յընդարձակ սահմանս ընդ մէջ Եփրատայ, Արինժայ, և Հիւսիսային ափանցն Պարսից ծոցոյն և Կարմիր ծովուն, ի Մետինէ ցԱլիսպօ, իսկզբանն էին Երրայեցիք, զի և ցարդ որահայանեալ նամանութիւնքն այժմեան Բենի - Հա- Հախար և Հին Իսաքար անուանցն, որ մի էր յանկեղոց մետասան ցեղիցն Եուգայի, զնոյն ցու- ջանէ, և ուշադրութեան արժանի է, զի գաւառսն Հեմն, Հեղերան, Եուգէ (Եաֆայ) և Ջիօֆ, որք մեծագոյն մասն կազմեն Հարաւային Արեւմ- տեան Արարիոյ, յազմանութիւ բնակիչք տեսանին յԱրրայեցւոց. զոր օրինակ ի Սան մայրաքաղաքն իմամին Յեմնայ գտանին 5,000 հօգի Հրեայ և ի գաւառն Եուգէի 3,000, Դժբաղդութիւն ինձ էր այն, զի որչափ Հրեայք Հանդիպեցան, տգեղք զողով չկարացին զիտել և յայանել թէ յորմէ ցեղէ է ծագումն նոցա, Պատմիչք Արաքաց, Արդի- Փիդա, Համզա, Նուլարի, և այլք պատմին թէ ի Հարաւային Արարիա, ի թագաւորութեանս Ամրու — իրն — Ամր, Մացիքի անուանեալ արքային Հի- մարթիթայի, կառուցաւորութիւնն տեղի եւ Մով- սիսական օրինաց, զորս փախստեալ յետ աւերա- ծին Նրուսաղէմայ Հրեայք բերին մուծին ի Հե- ուուր կողմանս Արարիոյ, այլ զարձեալ զօրանայ և բռնայ զօրէնս նոցա մնացեալ միայն ի գա- ւառն Հեղերան տակաւին սեղանք միոյն Ասու- ծոյ Փնչէ ի Փրկչական 502 թուական. իսկ յոր- ժամ քրիստոնեայ Եթովպացիք առաջնորդու- թեամբ Արդատայ տիրեցին Հարաւային Արարիոյ, փախճան և աստանօր եղաւ Հրեական օրինաց, Հիմնաւոր փաստ այսր կարէ լինել հնագոյ և բա- բեկարգ տէրութիւն Հրեից որ գտանի ցարդ ի սահմանս Յեմնայ և Եթովպիոյ, ընդ Տէրու- թեամբ Եթովպացւոց, և անուանի տէրութիւն Քեղաճաց, Քեղաճք ունին զհամազօր թագաւոր իւրեանց, են քաջք, և ճարտարք յարհեստ, վասն որոյ և Եթովպացիք, որ ըստ մտաւորակա- նին յոյժ յանեալք գտանին քան զնոսա, կա- խարդս անուանեն զառաջինն, պատմութիւն այսր

տէրութեան ծածկեալ և անթափանցելի խաւ- րաւ:

Դիցուք աստանօր և զհետագայ հետաքրքրա- կան աւանդութիւնդ, նորին զարձեալ Պ. Արի- տէի. « ի հարաւեանն Արարիա, ի մէջ Մուսա և Հեակ լեւանց, մերձ փոքրիկ շինի միոյ անուանե- լոյ « Սուքէճումմա, (ուրբաթի շուկայ) հետի ի Մեքէէէ երից աւուրց ճանապարհաւ, անկանի փոքրիկ լեւան մի, 300) ռոմաշափ բարձրութեամբ, և ի զուէս նորա տեղի մի Արեր ասացեալ. ի կա- տար Արերայ գտանի փոքրիկ քարաշէն առն, յո- րում է գերեզման սրբոյն Մահմետականին Մու- սայի (Մովսէս), զորմէ հետագայ աւանդութիւնդ է ի ժողովուրդս տեղւոյն, և որում ընծայի յարգ մեծ ի լուսնոյակ չըմակայս Եանդիտիլի ժամա- նակաց հետէ Լեիս—Մուսա, այր արգար և մայր- րակեաց, հովիւ կարգեալ հօտի բնակէր յայտոսիկ կողմանս, եկն միանգամ բարկութիւնն Ասուծոյ ի վերայ երկրին և արար երաշտութիւն. իոցան աղբիւք, չորացան ամենայն դաշարիք և տակաւ կորնչին մարդ և անասուն ի ծարաւոյ. յայնժամ եկաց Մուսա յաղօթս լուաւ նմա Ասուծած և հրամայեաց փայտիւ ձեռին հարկանել զլեւան Արեր, և իրրեւ արար, բացան ժայռք, և ջուր յորդ ընթացաւ ի զովացումն պաքիւրց և խորշակահար գալարեաց, Ածին զիս ի նոյն տեղի, ուստի ար- զարեւ ջուրն վաղէր հրաշագործեալ, այլ յանձ- րեոց, և ես ընդ անձուկ անց ինչ հայեցեալ նըշ- մարեցի տեղի խորագոյ, ուր ի յորդ անձրեաց ժողովեալ ջուրցն զաւերորդն ընդ ահն աղբիւրն ի զուրս վարէին. այլ զարմանք, թէ որչափ հա- մաձայնութիւնք են աւանդութեանս ընդ Մովսի- սեան հրաշից, Մովսէս գաւաղանաւ զվէմն հեր- ձեալ ի ստորոտս Քորեբայ, բղխեցուցանէ ջուր յարբումն Իսրայելացւոց, Մուսա (Մովսէս) զնոյն առնէ ի ստորոտս Արեր լեւին, ի պէտս մարդկան և կենդանեաց, միմիայն երկորքն հրաշագործքն ո- րոշն հեռաւորութեամբ տեղեացն ի միմեանց հինգ հարիւր ժամօք, Մուսա և Մովսէս չիցեն արդեօք մի և նոյն անձնք, կամ թէ մարթ է ա- սել թէ այս Մուսա իցէ սուրբ ոմն կարի հինա- լուրց, որ և համարի լինել հիմնադիր Մուսի կամ Մօսի քաղաքի, որ ի զիրս Մովսիսի նշանակէ զա-

րևմտեան սահման ընակութեան ցեղին Յոկտա-
նայ. Ծննդոց զլ. Ժ. համար 30:

(Շ-բ-ն-ի-է-է)

ԱՐԻՍՏԱՎԻՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՍԵՂՐԱԿԵԱՆ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՍՎՋՐՆԱԿԱՆ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՐԵՂՈՅԵՐԵՐԸ

(Շ-բ-ն-ի-է-է)

ԺԲ.

Չ-բային լռիչներ, ընդ հասնելու.

Այժմ տեսնենք ի՞նչ է պատահում ջրի հետ, երբ որ նա տաքանում է կամ սառչում:

Վեր առնենք մէկ միաբերնանի մետաղէ խողովակ և յարմարցնենք նորան մի մսոց, խողովակը կիսով չափ ջրով լցնենք, մսոցը մացնենք նորա մէջ և սկըսենք խողովակը տաքացնել կանթեղի վերայ: Երբ որ ջուրը եռայ, մսոցը կսկսի արագապէս բարձրանալ: Բայց եթէ խողովակը մսոցի հետ ընկղմենք պաղ ջրի մէջ, մսոցը ցած կլինի: Ախոցի այդ բարձրանալը և ցածրանալը յառաջ է գալիս նորանից, որ ջուրը շոգիանալով բաւականին լայնանում է և աւելի մեծ ծաւալ է բռնում և հըռում մսոցին դէպ ի վեր: Երբ որ խողովակը ընկղմում ենք պաղ ջրի մէջ, ջրաշոգիները վերըստին փոխարկվում են ջրի, որով նա քիչ ծաւալ է բռնում և դորա համար մսոցը սկսում է ցածրանալ: Տաքացած խողո-



վակի մէջ մենք կարող ենք ձեռքերով ներս հրել մսոցը, բայց հէնց որ ձեռքներս յիտ քաշենք, նա իսկոյն կսկսի բարձրանալ: Ուրեմն ջրային շոգիները առաջդական են:

Շոգիշարժ մեքենաները, որ գործ են դնում երկաթուղիների վերայ և գործարաններումը, կախումն ունին ջրային շոգիների այս առաջդականութիւնից: Աերկայացնենք մեզ մի կաթսայ ամրացած կափարիչով: Կափարիչից երկու խողովակ է տարած մի երկայն և կլորակ արկղի մէջ, որ ասվում է դլան: Այդ դլանի մէջ կարող է ազատութեամբ շարժել մսոցը, որ կայ արդէն նորա մէջ: Յիշեալ երկու խողովակներից մէկը տարած է դլանի վարին մասը, իսկ միւսը՝ վերին, և երկոքին խողովակներն էլ մի մի ծորակ ունին: Չլանի հակառակ կողմից գալիս են նոյնպէս երկու խողովակ ծորակներով, մինը՝ վարին, միւսը՝ վերին մասներից: Այդ խողովակները տարած են ուրիշ արկղի մէջ, որ անուանվում է խառնուցիչ կամ ցլը-խառն: Խառնուցիչը նորա համար է շինուած՝ որ պաղեցնէ ջրային շոգիները, այդ պատճառով էլ նա միշտ պատած է պաղ ջրով: Խառնուցչի վարին մասնումը մի ծակ կայ, որով դուրս է հեղում նորա մէջ ժողովուած ջուրը:

Կաթսան ջրով լցնելով տաքացնում են: Երբ որ ջուրը եռէ գալիս, վարի կողմի խողովակի ծորակը բաց են անում: Այս պէս խողովակն է, որ գնում է կաթսայից դլանի մէջ: Բաց են անում ծորակը և վերին խողովակի՝ որ դլանից գնում է ցլը-տարանը, այդ ժամանակ ջրային շոգիները առաջին խողովակով բարձրանալով մըս-